Doi: 10.56 737/2953-7843-2026.07-75

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՍ – ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՁՈՒԳԱՀԵՌԸ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԵՐԿՈՒՄ[1]

Վայոց դարձից անցել էր ավելի քան հարյուր տարի: Մի կողմից հայ հասարակության ընդգծված ազգային առանձնահատկությունների, մյուս կողմից՝ անկախ պետականության պայմաններում նոր կրոնի՝ քրիստոնեության ամբողջական տարածումն ու արմատավորումն այդ ընթացքում կենսական քաղաքական խնդիր չէր դարձել: Դ. դարավերջին Պարսկաստանի եւ Հռոմեական կայսրության միջեւ Հայաստանի բաժանման ու թագավորական իշխանության հետագա գոյության վտանգման հետեւանքով դավանական թվացող այդ հարցը Հայոց Եկեղեցու համար վերածվեց ազգային ինքնության պահպանման առաջնային խնդրի: Դրա լուծմանն էր կոչված հայկական գրերի ստեղծմամբ, ուսումնական համակարգի հայկականացմամբ եւ Աստվածաշնչի թարգմանության նախաձեռնությամբ սկիզբ առած «Ոսկեդարը»[2]: Վերջինիս շրջանակում՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» պետք է լիներ ծրագրված այդ գործի համար ճանապարհ հարթողը, առաջամարտիկը[3]:

Խնդիրը ոչ թե քրիստոնեական վարդապետության գաղափարական նրբությունների՝ հայ մտքին դժվար հասանելի լինելն էր, այլ նոր կրոնի դեմ հայ հանրության ավանդական–ազգային ինքնության առանձնահատկությունների պատնեշի հաղթահարումը: Մեկդարյա փորձը ցույց էր տվել, որ (անկախ լեզվական հանգամանքից) դա հնարավոր չէր օտար միջավայր եւ գործող անձեր ներկայացնող աստվածաշնչյան իրադարձությունների ու կերպարների, տեսական անառարկելի դրույթների վերաբերյալ քարոզչությամբ: Այսինքն՝ միայն Աստվածաշունչ մատյանի հայերեն

---

[1]* *Ստացուել է՝ 15.04.2026, գրախօսուել է՝ 18.07.2026: Էլ. հասցէ՝* ashot.sargssyan@gmail.com:

[2] *Այս մասին մանրամասն տե՛ս* Ա. Սարգսյան, *Հայոց դարձի երկրորդ փուլը. հիմնական քաղաքական օրակարգն սպասարկող ծրագիրը, ԲՄ, 2024, թ. 38, էջ 48–73:*

[3] *Հիմնավորումները տե՛ս* Ա. Սարգսյան, *Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ստեղծման ազգային-կրոնական միջավայրը եւ քաղաքական նպատակը, ՊԲՀ, 2025, թ. 3, էջ 3–26:*

թարգմանությունը բավարար չէր խնդիրը լուծելու համար. դա հնարավոր կարող էր լինել քարոզչանյութի պատմական հենքի տեղայնացմամբ, իրողությունների հայկականացմամբ, ազգային գործող անձերով։

Ագաթանգեղոսի Պատմության իրադարձային հիմքը Տրդատ Գ.-ի հրամանով եւ Ս. Գրիգոր Լուսավորչի գործակցությամբ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու պատմական իրողությունն էր։ Դրա հիմամբ անհրաժեշտ էր ստեղծել տպավորիչ, ներգործուն մի պատմություն, որը ստվերում կթողներ, դուրս կմղեր դեռ կենսունակ արմատներ ունեցող հեթանոսականը, ուստի եւ՝ աշխարհականը, նոր կրոնը կդարձներ «ազգային» եւ հարազատ։

Քրիստոնեության հետ կապված պատմական որեւէ այլ դրվագով եւ անձերով հնարավոր չէր լինի ներազդուն նման մի երկ ստեղծել՝ Հայաստանում նոր կրոնը տարածելու եւ արմատավորելու համար։ Հնարավոր չէր ո՛չ Քրիստոսի կողմից Հայաստան ուղարկված եւ այստեղ նահատակված առաքյալների վերաբերյալ ավանդության[4], ո՛չ անձամբ Քրիստոսի (եթե անգամ նա մեր երկիր «բերվեր») կերպարի միջոցով։ Առաջին՝ նրանք օտար էին եւ «հեղինակություն» չէին ներհայկական միջավայրում[5], երկրորդ՝ նրանց վերագրված գործունեության շրջանի առնչությամբ չէր

---

[4] *Այդ ավանդությունը տարածվել էր Ե. դարասկզբին եւ դրանից էլ առաջ (տե՛ս* Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, Ս. էջմիածին, 2001, էջ 9–10.* Մ. Աբեղյան, *Երկեր, հ. Գ., Երեւան, 1968, էջ 377–348.* Ք. Տեր-Դավթյան, *ԺԱ.–ԺԵ. դարերի հայ վարքագրությունը, Երեւան, 1980, էջ 15։ Ըստ էության՝ այդ է վկայում Փավստոս Բուզանդը, թե իրենից առաջ առաքյալների մասին արդեն ընդարձակ գրել են ուրիշները, ուստի ինքը համառոտ կշարադրի (տե՛ս* Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս, Վենետիկ, 1933, էջ 2)։ Նույնն է ասում նաեւ Մովսես Խորենացին. «Այս ամենայն, որպէս ասացաք, յայլոց պատմեալ յառաջագոյն, քան զմեզ....» (*Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ Ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները՝ Ա. Սարգսեանի, Երեւան, 1991, էջ 158)։*

[5] *Սա կարեւոր հանգամանք է, ինչն ակնհայտորեն ցույց է տալիս սույն իրողությունը. Ե. դարի պատմիչներից Ագաթանգեղոսը, Կորյունը, Եղիշեն, Ղազար Փարպեցին իրենց երկերի նույնիսկ ամենահարմար տեղիներում առաքյալների անունները չեն հիշատակում։ Առաքյալների «գործառութային» դերը, կարծես, առավելապես արտաքին աշխարհի հետ էր կապվում, երբ քրիստոնեական աշխարհում առաքելական ծագումը եկեղեցու ինքնուրույն եւ ինքնիշխան լինելու (նաեւ նման ծագում չունեցողների նկատմամբ գերագահության) իրավունքի հիմք էր դիտարկվում։ Ուստի կարծում ենք՝ Ագաթանգեղոսի երկի շարադրման շարժառիթն ու նպատակը միմիայն քրիստոնեության լիակատար տարածման եւ ամրապնդման հիմնական խնդիրը լուծելն է եղել։ Այս երկին այլ բան՝ Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը եւ առաքելական ծագումը հիմնավորելու նպատակ վերագրելը (նման կարծիք տե՛ս «Հայոց պատմություն», հ. 2, գիրք*

կարող արձանագրվել քրիստոնեությունը պետականորեն ընդունելու պատմական փաստը, որն անքակտելիորեն կապված էր Տրդատի Մեծի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի անվան ու ժամանակի հետ: Պետք էր մի նոր՝ հայկական ավետարան[6], պետք էին ուշագրավ իրադարձություններ, համոզիչ, ներգործուն ու նաեւ առինքնող կերպարներ, ինչպես Ագաթանգեղոսի երկում ներկայացվող Ս. Գրիգոր Լուսավորիչը եւ Տրդատ արքան, երկրորդ տեղում, բայց ոչ երկրորդական դերում՝ Հռիփսիմյանց կույսերը:

Թե ինչպիսին էին եղել պատմական իրադարձության՝ քրիստոնեության որպես պետական կրոն ընդունման իրական մանրամասները, հարյուր տարի անց որեւէ մեկն այլեւս չէր կարող հիշել: Հնարավոր է՝ ինչ-որ հիշատակություններ փոխանցվել էին ներեկեղեցական բանավոր ավանդությամբ, նաեւ որոշ տեղեկություններ արձանագրվել էին, որոշակի նյութեր պահպանվել էին, օրինակ՝ եկեղեցու կամ արքունի դիվանում, սակայն դրանք ընկալելի եւ հասանելի չէին հասարակության լայն շրջանակին: Ուստի եւ՝ խնդիր չէր, պահպանելով պատմական իրադարձային հիմքը, դրա վրա քրիստոնեության տարածման եւ արմատավորման արդյունավետ, ներգործուն պատմություն շարադրելը: Մյուս կողմից, սակայն, դա անհրաժեշտ էր անել այնպես, որ տվյալ ժամանակի մարդու ընկալումներում չանցներ հնարավորի ու հավաստիի սահմանագիծը[7], չտուժեր երկի համոզչականությունը: Հակոտնյա թվացող այս երկու մղումներն էլ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ստեղծման բնորոշիչներն էին լինելու:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» հիասքանչ գրական երկ է, պատմագրական կարեւոր հուշարձան, իսկ առաջին հերթին այն Դ.–Ե. դարերի սահմանագլխին ծառացած հիմնական քաղաքական խնդիրը երեւակող, ներկայացնող վավերագիր է, այդ խնդիրը լուծելու համար ստեղծված

1-ին, Երեւան, 2018, էջ 534), մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը, քանզի նման ակնարկի կամ ենթադրության հիմք Ագաթանգեղոսի Պատմությունը պարզապես չունի:

[6] Հնարավոր է, իհարկե, որ Տրդատ Մեծն ունեցած լիներ Ագաթանգեղոս անունով քարտուղար, սակայն տվյալ երկի ստեղծման քաղաքական շարժառիթները նկատի ունենալով՝ առավել հավանական է, որ Հայոց դարձի պատմության հեղինակի Ագաթանգեղոս անունը («ավետաբեր հրեշտակ») մտահղացվել է՝ նկատի ունենալով նրա առաքելությունը:

[7] Այնուամենայնիվ, այստեղ հրաշքները շատ ավելի պակաս, ավելի չափավոր են, քան՝ Ավետարանում: Չպետք է մոռանալ, որ Ավետարանների հիմնական հասցեատերը Ա. դարի հասարակության (Հռոմեական կայսրության արեւելյան շրջանների) տորին, աղքատ խավերն էին, մինչդեռ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հիմնական «թիրախը» Ե. դարի հայ ազնվականությունն էր:

գործիք, միջոց՝ իրականցված մեծագույն հմտությամբ եւ օրվա առաջնային քաղաքական օրակարգի հստակ ըմբռնմամբ։ Գործնական այս տեսանկյունից էլ պետք է դիտարկել այս երկն ընդհանրապես եւ նրա հիմնական կերպարներին մասնավորապես։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ – ՔՐԻՍՏՈՍ ՋՈՒԳԱՀԵՌԸ

Ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»՝ կեսարիայում մեծացած եւ քրիստոնյա դարձած Գրիգորը, դայակներից իմանալով իր հոր՝ Անակի գործած չարիքի մասին, գալիս է Տրդատ թագավորի արքունիք՝ նրան ծառայելու (չի նշվում, թե որպես ինչ, բայց ակնհայտ է՝ ի հատուցումն իր հոր կատարած ծանր հանցանքի)։ Գալիս է՝ առանց բացահայտելու, սակայն, իր քրիստոնյա լինելը (37)[8]։ Իրական եւ պատմական է Գրիգոր անունով անձը, նրա՝ քրիստոնյա լինելը, կապադովկիայի կողմերից Հայաստանի թագավորի արքունիք գալը (ոչ թե ինքնակամ, այլ Տրդատի հրավերով)։ Պատմական իրողություն է Տրդատ Մեծ թագավորի եւ Գրիգորի իրականացրած Հայոց դարձը։ Դրանից դուրս՝ իրադարձային մանրամասներում, Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունները քննարկելի են ոչ թե գիտական պատմության, այլ մի կողմից՝ երկի ստեղծման նպատակի ներքին տրամաբանության, մյուս կողմից՝ Ե. դարասկզբին հետապնդվող վերոհիշյալ հիմնական քաղաքական օրակարգի տեսանկյունից։

Ագաթանգեղոսի Պատմությունը որպես գրական հուշարձան դիտարկելիս առանցքայինը Ս. Գրիգոր Լուսավորչի կերպարն է, մնացյալ ամեն ինչ, կարծես, ծառայում է նրա կերպարի կերտմանը։ Հայ մարդը ինչի՞ շնորհիվ պետք է ընդուներ նոր կրոնը՝ քրիստոնեությունը, թողներ իր նախկին՝ հեթանոսական հավատալիքը եւ արժեհամակարգը. բնականաբար՝ ոչ թե հաճախ խրթին եւ անընկալելի դավանաբանական բանաձեւումների, քարոզների, աստվածաշնչյան պատումների, այլ առաջին հերթին առինքնող, համոզող մարդ-կերպարի շնորհիվ։ Այս գիտակցումով է շարադրվել Ագաթանգեղոսի Պատմությունը, որի գլխավոր հերոսը պետք է վստահություն եւ հավատ ներշնչեր, վստահություն եւ հավատ՝ անձի նկատմամբ։

---

[8] *Օգտագործում ենք հետեւյալ հրատարակությունը՝ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ.՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, Տփղիս, 1909։ Այս հրատարակությանը հղումները, հարմարության նկատառումով, տվել ենք հոդվածի շարադրանքում՝ փակագծում՝ նշելով ոչ թե հրատարակության էջը, այլ պարբերության թվանիշը։*

Անձ-կերպարին վստահելով՝ պետք է վերջինիս խոսքը դառնար անվերապահ եւ անքննին հավատքի հիմք. իր նկատմամբ առաջացած հավատի միջոցով սույն կերպարը պետք է նույնպիսի հավատ ներշնչեր նաեւ իր պաշտած Աստծու հանդեպ:

Արձանագրենք մեկ կարեւոր փաստ եւս. քրիստոնեությունը՝ որպես կրոն, նման տարածում եւ ազդեցություն չէր կարող ունենալ, եթե այն առանձնացված լիներ Քրիստոսի հայտնի կերպարի հիմնական բնութագրիչների ամբողջությունից: Անտեսենք աստվածաշնչյան վկայությունը, սրբազան ավանդությունը եւ պատկերացնենք, որ Քրիստոս բնական ծագում (ծնունդ) է ունեցել, հրաշքներ չի գործել, թեկուզ հետապնդվել, հալածվել է, սակայն չի մատնվել, չի չարչարվել, չի խաչվել, հարություն չի առել, այլ մինչեւ խոր ծերություն իր աշակերտների հետ միայն քարոզել է իր վարդապետությունը, մահացել է բնական մահով, այս դեպքում արդյոք քրիստոնեությունը համաշխարհային կրոն կդառնա՞ր, կամ քրիստոնեական վարդապետությունն այդքան մեծ ազդեցություն կունենա՞ր:

Ե. դարում անհրաժեշտ էր հայ իրականության մեջ ստեղծել վստահություն եւ հավատ ներշնչող, ներգործուն, սակայն ազգային նկարագրով նմանօրինակ մի կերպար. այնպիսի կերպար, որը կլիներ առավել հմայիչ ու համոզիչ, քան հայ մարդուն ծանոթ հայրենի հեթանոսական չաստվածներն իրենց պատմություններով եւ առասպելներով: Այդ կերպարը հայ ազգի համար առավել ընդունելի եւ գրավիչ պետք է լիներ իր ծագմամբ, վարքով, գործով, նվիրումով, հրաշքներ գործելու ունակությամբ, հանուն իր գաղափարի՝ անմնացորդ անձնազոհությամբ, գործունեության հայկական միջավայրով, Հայոց պատմության կարեւորագույն մի դրվագի առանցքային անձ, վճռորոշ դերակատար լինելու հանգամանքով: «Հայոց պատմության» հեղինակը նման մի կերպար պետք է կերտեր Գրիգորից, իսկ այդ կերպարի լավագույն նախօրինակը կարող էր լիներ Քրիստոս[9], բնականաբար, ոչ լիովին նույնությամբ, այլ վերոնշյալ հիմնական գծերով եւ «հօգուտ» Գրիգորի տարբերություններով:

---

[9] *Կարելի էր մտածել, թե Քրիստոսի ավետարանական կերպարի հետ Գրիգոր Լուսավորչի կերպարի հիմնական հատկանիշների համընկնումները կարող էին նաեւ ինքնաբերաբար՝ ենթագիտակցության թելադրանքով կամ քրիստոնեության ոահվիրայի նման մի կերպարի կերտման մղումով պայմանավորված լինել: Համընկնումների մի մասը գրեթե հայելային են, իսկ տարբերություններն այնպիսին են, որ իրենց բացատրությամբ նույն կարծիքին են հանգեցնում:*

ԾՆՈՒՆԴԸ ԿԱՄ ԾԱԳՈՒՄԸ

Քրիստոսի ծնունդը սովորական՝ մարդկային ծնունդ չէ, նմանը չունեցող հրաշք է՝ աստվածային հայտնություն, ինչով անկրկնելի է. Նա Աստծու Որդին էր, ընդ որում՝ միակ, միածին (տե՛ս Մատթ. Ա. 18, Գ. 17)։

Գրիգորի ծնունդը, բնականաբար, չէր կարելի համեմատել Աստծու Որդու հրաշափառ ծննդյան հետ, ուստի այս հանգամանքը հաշվի առնելով՝ նրան տրվել է ժամանակի հայ հասարակության ընկալումներում բարձրագույնը՝ ամենաազնվազարմը համարվող Պարթեւ Արշակունիների տոհմից (որից սերվել էին նաեւ հայ Արշակունիները) ծագում։ Գրիգորը նույն պարթեւական թագավորական այդ տոհմի նահապետներից մեկի՝ Անակի որդին էր[10]։

ՆՈՐԱԾՆԻ՝ ՄԱՀԻՑ ՓՐԿՎԵԼԸ

Քրիստոսի հրաշափառ ծնունդի նկարագրությունից հետո կարեւոր մի հանգույց կա. Նրան մահ է սպառնում (Հրեաստանի թագավոր Հերովդեսի չար մտադրությունը), ինչից, սակայն, Նա հրաշքով փրկվում է (տե՛ս Մատթ. Բ. 13–14)։

Նման մի դրվագ կա նաեւ Գրիգորի կյանքում. նրա հայր Անակը հյուրընկալվում է Հայոց արքա Խոսրովի մոտ, խաբեությամբ սպանում նրան, որից հետո ինքն էլ ընտանիքով կոտորվում է։ Գրիգորը՝ միակը Անակի ընտանիքից, միամյա մի մանուկ, փրկվում է. նրան փախցնում, տանում են «Հունաց» կողմերը (34)։

ՀՐԱՇՔՆԵՐ

Մարդու համար որեւէ բան այնքան տպավորիչ չէ, որքան հրաշքը։ Քրիստոսի գործած հրաշքները երկու տեսակի են։ Դրանց մի խումբը անելանելի թվացող իրավիճակներում ելք գտնելն է. Իրեն հետեւող շուրջ

---

[10] Ավելի ուշ, երբ անհրաժեշտություն է առաջանում Հայոց Եկեղեցու հիմնադրումը անմիջապես կապելու Քրիստոսի առաքյալների հետ, հիշատակվում է ավանդություն, ըստ որի՝ Գրիգորի մայրը հղիացել է Թադեոս առաքյալի գերեզմանի մոտ, որտեղ խփված է եղել Անակի վրանը (տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները՝ Ա. Սարգսեանի, Երեւան, 1991, էջ 212), ինչով նրա ծագմանը լրացուցիչ կշիռ ու խորհրդավորություն է հավելվել՝ որպես հիմք նրա հետագա առաքելության։

5000 հոգուն Աստծու Որդին կերակրում է՝ անհրաժեշտ չափով բազմացնելով ձեռքի տակ եղած հինգ հացն ու երկու ձուկը (տե՛ս Մատթ. ԺԴ. 17–21), կամ՝ քամու պատճառով ափից հեռացած նավակին հասնելու համար ծովի վրայով քայլում եւ դադարեցնում է քամին (տե՛ս Մատթ. ԺԴ. 24–32), ջուրը գինի է դարձնում (Հովհ. Բ. 1–11) եւ այլն:

Հրաշքների երկրորդ խումբը հիվանդներին՝ մասնավորապես անհույս եւ անբուժելի ախտահարներին բժշկելն է, մեռյալներին վերակենդանացնելը. այդպիսի դրվագներն Ավետարանում բազմաթիվ են:

Քրիստոսի գործած՝ առաջին խմբի հրաշքներին կարող են զուգադրվել (բայց ոչ հավասարվել) Գրիգորի գործունեության երկրորդ փուլում մեհյանների կործանումը, կուռքերի ոչնչացումը, դեւերի տեսք ստացած քրմերին հալածելը: Անբուժելի հիվանդությունների բժշկումը նույնպես Գրիգորի գործունեության կարեւոր բաղադրիչն է. նա բժշկում է խոզի կերպարանք ստացած Տրդատին՝ ծանր մեղանչումից, ապա զղջումից եւ ապաշխարությունից հետո, նաեւ՝ նրա շրջապատի ախտահարված մարդկանց: Մահացածին վերակենդանացնելու դեպք չկա. դա միայն աստվածային զորություն կարող էր լինել եւ «անհնարին կլիներ» Գրիգորի դեպքում (նա, այնուամենայնիվ, մահկանացու էր), կամ մտածել են՝ նման չափազանցությունն անցնում է որոշակի սահմանը, եւ կարող է կասկածելի դարձնել պատմական երկի հավաստիությունը:

ՋԱՐՋԱՐԱՆՔՆԵՐԸ

Ինչպես Քրիստոսի, այնպես եւ Գրիգորի դեպքում առ Աստված անմնացորդ հավատը նրա կերպարի առանցքային հատկությունն է՝ արտահայտված բազմաթիվ դրվագներում: Ուստի նմանության հաջորդ բնութագրիչը ամեն տեսակի չարչարանքներն անտրտունջ կրելն է: Քրիստոս մարմնական չարչարանքների է ենթարկվում վերջում՝ խաչելությունից 1–2 օր առաջ, երբ նրան արդեն մահվան էին դատապարտել. այդ չարչարանքների նկարագրությունը ծավալուն չէ: Ահա՛, ըստ էության, ամբողջը. «Յայնժամ թքին ընդ երեսս նորա, եւ կռփեցին զնա. եւ ոմանք ապտակեցին, եւ ասեն. Մարգարեա՛ց մեզ Քրիստոսդ, ո՞վ է՝ որ եհարն զքեզ» (Մատթ. ԻԶ. 67), «Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբայն. եւ զՅիսուս գան հարեալ ետ ի ձեռս՝ զի խաչեսցի: Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս. եւ ժողովեցին ի վերայ նորա զամենայն զգունդն: Մերկա-

ցին զնա, եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր։ Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, եւ եղէգն յաջու ձեռին նորա. ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին եւ ասէին. Ո՛ղջ եր՝ թագաւոր Հրէից։ Եւ թքեալ ի նա առնուին զեղէգնն եւ ծեծէին զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղամիդն կարմիր եւ ագուցին նմա զիւր հանդերձն, եւ տարան զնա ի խաչ հանել (Մատթ. Իէ. 26–31)։

Գրիգորի չարչարանքները տասնյակ օրեր են տեւում (չհաշված 13 տարի խոր Վիրապում օձերի ու զեռունների մեջ բանտարկությունը). դրանց նկարագրություններն ընդարձակ են եւ անհամեմատելի են դաժանությամբ ու սարսռեցուցիչ մանրամասներով։ Համեմատության համար բերենք ընդամենը երկու օրինակ.

«Եւ ետ կապել զնա ձեռս յետս, եւ արկանել գայլ ի բերան նորա, եւ ետ կախել շառաշեղս աղի ի վերայ ողին նորա, եւ տալ գելոցս կրծից նորա, եւ արկանել առասանս ի կապս կրծից գելարանացն, կապել եւ համբառնալ ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մեքենայիւք։ Եւ կայր պրկեալ կապել այնպէս զաւուրս եւթն» (69)։

«Եւ ետ հրաման բերել բեւեռս երկաթիս եւ վարել ընդ ներբանս ոտից նորա. եւ առեալ զձեռանէ նորա աստի եւ անտի՝ ընթացուցանէին զնա յայս կոյս եւ յայն կոյս. եւ արիւնն հոսէր, իջանէր յոտից անտի, եւ ոռոգանէր զերկիրն սաստիկ յոյժ» (103)։

Այսինքն՝ Գրիգորի կրած չարչարանքները դաժանության առումով ակնհայտորեն «գերազանցում են» Քրիստոսի չարչարանքներին։ Ընդ որում, եթե Քրիստոս չարչարանքների ընթացքում միայն խոնարհաբար եւ աստվածային համբերությամբ լռում էր, ապա Գրիգորը չարչարվելիս լուռ չէր. նա խոսում էր՝ հակաճառում, աղոթում կամ քարոզում։

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոս երկրային կյանքի ընթացքում քարոզում էր Աստծու խոսքը՝ իրեն լսողներին հասկանալի եւ ընկալելի բոլոր ձեւերով։ Ճիշտ է, դա բացարձակ հարթ եւ անվտանգ չէր, սակայն խոչընդոտները հիմնականում հաղթահարելի էին, եւ քարոզչության ժամանակ Աստծու Որդու նկատմամբ մարմնական բռնության դեպքեր չեն հիշատակվում։

Գրիգորի դեպքում եւս առաջնայինը քրիստոնեական վարդապետության քարոզումն է (ինքն իրեն որպես քրիստոնյա բացահայտելուց հե-

տո). Նախ՝ քարոզելը Տրդատի հետ երկխոսությունների ընթացքում, ապա՝ Խոր Վիրապից դուրս գալուց հետո, տարբեր առիթներով, մեծ լսարանների առջեւ՝ ներառյալ ընդարձակ Վարդապետությունը բազմահազար ժողովրդի համար:

Այս դեպքում, սակայն, Գրիգորի կերպարն ունի նաեւ տարբերություններ՝ պայմանավորված Հայաստանի՝ պատմական տվյալ դրվագի առարկայական (օբյեկտիվ) հանգամանքներով եւ իր՝ Քրիստոսի առաքելությունից տարբերվող առաքելությամբ: Տարբերություններ կան նաեւ դրանից դուրս եւ կրկին «հօգուտ» Գրիգորի:

Գրիգորի քարոզչության առաջին մասը՝ որպես քրիստոնյա «բացահայտվելուց» հետո՝ մինչեւ Խոր Վիրապ նետվելն էր: Այն տարբերվում է Քրիստոսի քարոզչությունից եւ ունի երկու յուրահատկություն. առաջին՝ կառուցված է որպես երկխոսություն – հակաճառություն, կենդանի բանավեճ Տրդատ թագավորի հետ, երկրորդ՝ «զրույցն» ուղեկցվում է Գրիգորի աներեւակայելի չարչարանքներով:

Քրիստոսի քարոզչությունն ընթանում է առանց սուր եւ լարվածություն առաջացնող տեսարանների, հիմնականում՝ խաղաղ ու հանգիստ պայմաններում, ոչ մեծ «լսարանի» առջեւ: Տիրոջ վարքն ու խոսքը զուսպ են, Նա հաճախ իր ասելիքը բացատրում է առակների, այլաբանությունների, փոխաբերությունների, երբեմն՝ երկիմաստ խոսքերի միջոցով: Աստծու Որդին առավելապես խոնարհությամբ եւ համբերատարությամբ մեկնում, հորդորում է, քան՝ բանավիճում, «հարձակվում»: Քրիստոսի «ընդդիմախոսները» հուդայականություն դավանողները եւ Հռոմեական կայսրության՝ Իսրայելում իշխող պաշտոնյաներն են: Նրանց հետ սակավադեպ առնչությունների ընթացքում Քրիստոս հաճախ խուսափում է բանավիճելուց, Նա չէ երկխոսությունների նախաձեռնողը, զրույցներում հանդարտ է, զուսպ, քչախոս, պատասխանում է հակիրճ, երբեմն գերադասում է լռել[11]: Բարձրաստիճան այդ անձինք Աստծու Որդու քարոզչության հիմնական հասցեատերը չեն: Տիրոջ առաջնային «թիրախը» իր աշակերտներն են, որոնք էլ Փրկչի նախասահմանված խաչելությունից եւ հարությունից հետո պետք է գնային աշխարհով մեկ՝ տարածելու Նրա վարդապետությունը:

---

[11] Տե՛ս երկխոսությունները հռոմեացի կառավարիչ Պիղատոսի (Հովհ. ԺՀ. 28–40, ԺԹ. 1–16, Յովհ. ԺԹ. 8–11), Հրեից թագավոր Հերովդեսի (Ղուկ. ԻԳ. 6–12), քահանայապետ Կայիափայի (Մատթ. ԻՋ. 57–68) հետ:

Այս առումով Գրիգորը Քրիստոսի հակապատկերն է. նրա քարոզչությունն առաջին հերթին ուղղված է թագավորին, իշխանական ողջ վերնախավին: Արքայի հետ խոսելիս նա համարձակ է, «հարձակողական», հաճախ՝ հանդուգն, չի խորշում անգամ նրան ուղղված վիրավորանքներից եւ նրա պաշտած աստվածների հասցեին անարգանքից: Նա աշակերտներ չունի, եւ ինքը պետք է տարածի ու արմատավորի նոր կրոնը: Ագաթանգեղոսի երկի մտահղացման տրամաբանությամբ ու գործնական նպատակով պայմանավորված՝ այսպիսին պետք է լիներ Գրիգորի կերպարը, սա էր արդյունավետ լուծումը:

ՆԱՀԱՏԱԿՎԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոս պատրաստ է պատարագվելու (զոհաբերվելու)՝ գիտենալով, սակայն, որ կարող է նաեւ խույս տալ դրանից: Նա այդ քայլին չի դիմում, քանզի գիտակցում է իր փրկչական առաքելությունը եւ այդ ամենի ի վերուստ նախասահմանված լինելը, Նրան տրված է աստվածային իմացությունը. «Թէ համարիցիս՝ թէ ոչ կարիցեմ աղաչել զՀայր իմ. եւ հասուցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց: Այլ զիա՞րդ լնուցուն գիրք եթէ այսպէս պարտ է լինել» (Մատթ. ԻՋ. 53–54):

Հիսուս Քրիստոս, իր մատնության, չարչարանքների եւ խաչելության մասին կանխավ հայտնելով, վստահ է նաեւ, որ պիտի հարություն առնի (նովին մարմնով) եւ բազմի «Աստծու աջ կողմում». «Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պարտ է Որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել, եւ անարգել յերիցանց եւ ի քահանայապետից եւ ի դպրաց, եւ մեռանել եւ յերիր աւուր յառնել» (Մարկ. Ը. 31), «Բայց ասեմ ձեզ. Յայսմ հետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեանն՝ եւ եկեալ ընդ ամպս երկնից» (Մատթ. ԻՋ. 64):

Ի տարբերություն Քրիստոսի՝ Գրիգորը մարդ-արարած է, որը մահից հետո չի կարող հարություն առնել, սակայն ունի աներեր հավատ, որ նահատակությամբ կփրկվի իր հոգին: Երբ Տրդատը տանջանքներով ու մահվամբ է սպառնում Գրիգորին, վերջինս նրան հանգամանալից պատասխանում է, թե հանուն Աստծու եւ հավատի նահատակվելն իր համար մեծագույն պարգեւ ու երանություն կլինի միայն. «Եւ որ սպառնասդ ինձ մահու՝ ահա խառնես զիս ի գունդն Քրիստոսի, ուր են ամենայն կոչեցեալքն, հարքն եւ արդարք, եւ մարգարէքն եւ առաքեալքն, մարտիրոսքն եւ ամենայն ընտրեալքն» (57):

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի երկրային կյանքն ավարտվում է խաչելությամբ եւ երրորդ օրը հրաշափառ հարությամբ։

Սրան զուգահեռ կարող է դիտարկվել Գրիգորին վիրապ՝ թունավոր օձերով ու զեռուններով լի մի հոր նետելը, որ մահվան վճռի նույնքան ստույգ իրականացման դաժան ու անպատիվ մի եղանակ էր, ինչպես խաչ բարձրացնելը։ Ըստ այդմ էլ՝ վիրապից նրա ողջ դուրս գալը հարության հրաշքի նման մի իրադարձություն պետք է ընկալվեր։ Սա կարեւոր կետ է, եւ պատահական չէ, որ դեռ Ագաթանգեղոսի երկի Առաջաբանում էլ ընթերցողը հատուկ նախապատրաստվում է, որ Գրիգորի՝ վիրապից դուրս գալը հենց որպես հարություն առնելուն նման մի երեւույթ ընկալի. «....վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ, որոյ զվկայ անուն ժառանգեալ, որ ի մահ հասեալ մտեալ, եւ կամօքն Աստուծոյ այսրէն դարձեալ՝ ի վերակացութիւն դառնայր յերկիրս Հայոց։ Սա մտեալ ի դրունս մահու՝ դարձեալ անտի կամօքն Աստուծոյ....» (13)։

Հեղինակը, այնուամենայնիվ, ընթերցողի համար իր երկի հավաստիության «կարմիր գիծը» չանցնելու մտահոգությամբ, հանգամանալից նկարագրում եւ բացատրում է, որ Աստծու կամոք եւ զորությամբ Գրիգորը 13 տարի անվնաս է մնում թունավոր օձերի ու զեռունների մեջ (դրանք էլ Արարչի ստեղծածներն էին եւ Նրան էին ենթարկվում), սակայն ակնհայտորեն անհավատալի պիտի լիներ այդքան ժամանակ նրա կենդանի մնալն առանց ջրի ու սննդի։ Ուստի հեղինակն այս հարցին պատասխանում է մի այրի կնոջ կողմից ամեն օր Գրիգորին հաց եւ ջուր իջեցնելու դրվագով (տե՛ս 124)։

Առանց Քրիստոսի խաչելության եւ հրաշափառ հարության պարզապես չէր լինի քրիստոնեությունը. այդ իրողությունների նկատմամբ հավատն է եղել քրիստոնեական վարդապետությունը տարածող եւ արմատավորող հիմնական ուժը։ Գրիգորի դեպքում էլ առանց ճշմարտապես մահ նշանակող վիրապ նետվելու եւ այնտեղից ողջ դուրս գալու՝ բոլորի համար անհավատալի դրվագի, նրա քարոզչությանը որեւէ մեկը չէր հավատա. այս իրականության հանդիման է, որ Գրիգորի առջեւ ծնկի են գալիս Տրդատն ու հայ ժողովուրդը՝ պատրաստ լսելու եւ հավատալու նրա յուրաքանչյուր խոսքին։

Այս դեպքում եւս արձանագրելի է տարբերություն։

Քրիստոսի կերպարն առավել «մարդկային» է. իմանալով հանդերձ երկրային կյանքում իր համար նախասահմանված վախճանը՝ Նա, այնուամենայնիվ, խնդրում է Աստծուն. «Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղօթս եւ ասէ. Հա՛յր իմ, եթէ հնար է՝ անցցէ՛ բաժակս այս յինէն. բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու» (Մատթ. ԻՋ. 39)։ Հավելենք, որ հանուն Վարդապետի նահատակվելու անվերապահ պատրաստակամությունից հեռու էին Քրիստոսի աշակերտները, չնայած խոստացել էին մեռնել Նրա հետ։ Աստծու Որդու ձերբակալությունից հետո բոլորը լքում են Նրան. «Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա եւ փախեան» (Մատթ. ԻՋ. 56)։ Իսկ Պետրոսը մի գիշերում երեք անգամ ուրանում է Նրան (Մատթ. ԻՋ. 69–75)։

Գրիգորի կերպարն այս իմաստով անվարան է դարձված. նրա որեւէ խոսք, մտածում կամ արարք չի հուշում հանուն հավատի մահվանից վախենալու, խույս տալու, ողջ մնալու «մարդկային թուլության» մասին, ընդհակառակը՝ նա շտապում է դեպի հավիտենական կյանք. «Փութամ ես ելանել ի մարմնոյս, եւ առնուլ զկեանն յաւիտենից....» (100)։

«Հօգուտ» Գրիգորի թվացյալ այս տարբերության բացատրությունը պետք է լինի հետեւյալը։ Քրիստոսի ավետարանական կերպարը պետք էր իր աշակերտներին՝ Ուսուցչի վարդապետությունը քարոզելու եւ տարածելու համար՝ առանց իշխանության հասնելու կամ այն պահելու որեւէ խնդիր ունենալու, ուստի եւ ճշգրիտ է ստեղծված դրա հիմքը։ Գրիգորի կերպարով այլ խնդիր էր լուծվում. նրա կյանքի մանրամասները, չարչարանքների, Աստծու հանդեպ ունեցած անսասան հավատի նկարագրությունն անհրաժեշտ էր ոչ միայն նոր կրոնը հեթանոսական-ավանդական միջավայրում քարոզելու եւ արմատավորելու, այլ նաեւ այդ հավատքը գերագույն արժեք համարող, հանուն հավատի անձնազոհության պատրաստ, մարտնչող նվիրյալ-նահատակի քրիստոնեական կերպար (որը նախօրինակ պիտի դառնար) կերտելու համար[12]։ Հեթանոս հայ ժողովրդին քարոզելու եւ քրիստոնեական առաքելավանդ վարդապետությունը տարածելու համար առաջին «թիրախը», բնականաբար, պետք է լիներ ազնվականությունը, ուստի եւ նոր կրոնի սերմերը ցանվեցին նախեւառաջ

---

[12] *Մ. Աբեղյանը նույնանման դիտարկում ունի սրբախոսական եւ վկայաբանական թարգմանական առաջին գրվածքների վերաբերյալ, որոնցում «կենդանի օրինակներ էին տրվում քրիստոնեական առաքինի կյանքի, քրիստոնեական կրոնի համար անհողդողդ հավատարմության եւ նահատակվելու» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ., Երեւան, 1968, էջ 123)։*

արքունական միջավայրում: Առանցքային այս իրողությունը ցայտուն է հատկապես Եղիշեի եւ Ղազար Փարպեցու երկերում[13]: Անհրաժեշտ է նշել նաեւ, որ ըստ Ագաթանգեղոսի երկի՝ Գրիգորի կերպարով է մասամբ պայմանավորված Տրդատ Մեծի՝ նոր՝ միաստվածային կրոնի հանդեպ սկզբնապես ունեցած թշնամական եւ դաժան վերաբերմունքի փոփոխությունը, նրա զղջումը եւ քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելը:

Գրիգորի չարչարանքները, անշուշտ, չափազանցված են, ինչպես ասվեց՝ իրենց ծանրությամբ եւ դաժանությամբ անհամեմատելի Քրիստոսի չարչարանքների հետ: Դրանց մի մասը, որպես պատժի ձեւ, հնարավոր է, որ հայտնի ու կիրառելի է եղել ժամանակին, մի մասն էլ, թերեւս, հեղինակի բացառիկ երեւակայության արդյունքն է: Սա, կարծում ենք, երկի հեղինակի համար եղել է կարեւոր միջոց՝ մի կողմից Գրիգորի խոսքն ընթերցող/լսողի ուշադրությանն արժանացնելու, իսկ մյուս կողմից՝ ասելիքն առավել հավաստի, անկեղծ եւ ազդեցիկ դարձնելու[14]: Հանենք չարչարանքների դրվագները, միմյանց կցենք այն ամենը, ինչ ասում, քարոզում է Գրիգորը եւ դա դիտարկենք որպես խաղաղ ու սովորական իրավիճակում որեւէ լարանի ուղղված մի խոսք՝ նյութը նկատելիորեն կկորցնի իր գրավչությունը, ներգործելու ուժը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ այնպես, ինչպես Հայոց դարձի պատմությունը՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմութիւն»-ը շարադրվել է որպես հայ ազգային կամ ազգայնացված «Ավետարան», այնպես եւ դրա գլխավոր գործող անձի՝ Գրիգորի կերպարի համար, բնական է, որ նախօրինակ է եղել բուն Ավետարանի գլխավոր գործող անձը՝ Քրիստոս: Զուգահեռները, կարելի է ասել, երեք կարգի են: Առաջին դեպքում՝ մի քանի գծեր պարզապես մոտ են հա-

---

[13] Բազմաթիվ օրինակներից մեկը՝ Ղազար Փարպեցու երկից. «Եւ սպարապետն Հայոց.... առեալ ընդ իւր ի տանուտերացն Հայոց, որք ջերմեռանդն սիրով ճեպէին մարտիրոսական ժամուն պատահել.... եւ այլ տանուտէարք եւ սեպուհք եւ բազումք ի զօրացն Հայոց, որք ինքնայօժար փութով փափագէին լինել վրէժխնդիր ուխտի սուրբ եկեղեցւոյ եւ տալ զանձինս ի մահ ի վերայ սուրբ եւ ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի» (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատ.՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904, էջ 64):

[14] Դաժան չարչարանքների ընթացքում խոսելու, աղոթելու, քարոզելու այս միջոցը նույն նկատառումով գործածված է նաեւ Հռիփսիմյանց կույսերի դեպքում:

յելային օրինակման։ Երկրորդ դեպքում՝ Քրիստոսի կերպարի որոշ բաղադրիչներ (ինչպես՝ չարչարանքները) Գրիգորի դեպքում առավել պատկերավոր, ընդգծված ու չափազանցված են ներկայացվում։ Երրորդ կարգի զուգահեռները ոչ թե նմանություններ, այլ ընդհուպ հակադրականություն են բովանդակում։ Սակայն դա էլ յուրահատուկ ձեւով հաստատում է մեր դրույթը. այդ հակադրությունը պայմանավորված է Քրիստոսի եւ Գրիգորի՝ տարբեր առաքելություններ ունենալու, տարբեր միջավայրերում գործելու, տարբեր «լսարանների» իրենց խոսքն ուղղելու, տվյալ պահին տարբեր գործնական խնդիրներ լուծելու հանգամանքով։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Քրիստոս, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ագաթանգեղոս, Հայոց դարձ, Ավետարան, հրաշքներ, չարչարանքներ, քարոզչություն, խաչելություն, հարություն։

РЕЗЮМЕ

Спустя сто лет после принятия христианства в Армении стояла задача полного распространения и укрепления новой религии.

Перевод Библии на армянский язык как агитационный материал, сколь бы необходимым он ни был, не являлся достаточным условием для преодоления безразличия и сопротивления армянского общества, отличающегося устойчивыми национальными традициями, по отношению к новой религии.

«История Армении» Агатангелоса была создана для того, чтобы с помощью убедительных национальных образов решить задачу полноценного распространения и укоренения христианства, а также сделать веру ревностной. Соответственно, в ней (как и в Евангелии) важны не столько сами события, сколько действующие лица – образы.

Создатели истории обращения Армении руководствовались двумя, на первый взгляд, противоположными побуждениями: создать эффективную, действенную и работающую историю подачи христианства, но при этом не переступать в восприятии людей того времени границу возможного и достоверного.

Для создания образа главного действующего лица – Григория, как мы полагаем, прообразом послужил образ Христа в Евангелии. Два образа имеют очевидные параллели. Однако между ними есть и существенные различия, даже противоположности. Эти различия, тем не менее, обусловлены объективными

обстоятельствами: средой деятельности каждого, преследуемыми разными целями, различным историческим фоном в каждом конкретном случае, а также различием «аудитории».

SUMMARY

A hundred years after the adoption of Christianity in Armenia, the challenge remained of fully spreading and consolidating the new religion.

The translation of the Bible into Armenian, however necessary it may have been as a means of evangelism, was not sufficient to overcome the indifference and resistance of Armenian society, characterized by deep-rooted national traditions, toward the new religion.

Agathangelos's "History of Armenia" was written to use compelling national imagery to achieve the goal of fully spreading and establishing Christianity, as well as to foster a fervent faith. Accordingly, in this work (as in the Gospel), it is not so much the events themselves that are important as the characters–the archetypes.

The authors of the account of the conversion of Armenia to Christianity were guided by two motivations that, at first glance, seemed contradictory: to provide an effective, compelling, and credible account of the introduction of Christianity, while at the same time not overstepping the boundaries of what was considered possible and credible in the minds of the people of that time.

We believe that the figure of Christ in the Gospel served as the prototype for the creation of the main character, Gregory. The two figures share obvious parallels. However, there are also significant differences–even opposites–between them. These differences, nevertheless, are determined by objective circumstances: the context in which each operates, the different goals they pursue, the distinct historical background in each specific case, as well as differences in their "audiences."